հարս, այդ զույգն ընկերներով շրջապատված, նվագելով մանկական շվիներ՝ շրջում էր բակե-բակ, ամեն բակում զույգերից մեկը փայտե սրով սպանվում էր և նրան կենդանացնելու համար պահանջում էին նվերներ։ Տներից դուրս էին բերում չիր ու չամիչ, միրգ, մեղր, սովորաբար քաղցրեղեն, բայց և ձու, կարագ։ Այս խաղը վերջանում էր մանկական քեֆով։ Այս խաղի մեջ նվերների օգնությամբ արծարծվում էր սպանված ուժի կենդանացումը։

Շատ կարևոր եզրակացությունների կարելի կլիներ հանգել, քննելով բարեկենդանական օրերին բոլոր գավառներում տեղի ունեցող զանազան խաղերը, ինչպես Զանգեզուրի ոչ միայն կրպրտալախտին է, որտեղ լախտերի զարկերով կարպետի տակից դուրս էին բերվում և գործի էին դրվում նստողները, կամ կրղլենգին, որտեղ կաղը յուր ձեռքի զարկով ինքը երկու ոտքի է կանգնում, այլև ջոխտ թամբին՝ ջուխտ, որտեղ նույնպես հալածող զույգի զարկին ենթարկվողը ընդհանուր զարկերի տարափից ազատվում է, երբ իր զույգ ընկերն է վրա հասնում և նրա հետ զույգ կապում[37]։

Մի մագիկ գործողության հետք էլ կարելի է գտնել նաև տրնգի ու չրնգի բարեկենդանական խաղերի մեջ[38], որտեղ մի ձողով փայտիկին խփելով նրան քշում են հեռու կամ մոլլա-հրէն[39], որտեղ իրար վրայից թռչելով, տղաները հաջորդական թռիչքներով նույնպիսի առաջխաղացությամբ կարծես պիտի առաջ բերեն նույնը նաև բնության մեջ։

Մեծ պաս։ Բարեկենդանական ուրախություններն ու խաղերը վերջանում էին վորցակի՝ աքլորի առաջին կանչին, որից հետո ուտիսվա կերակուրների, ինչպես և խանի կամ Հարսի խաղերի միջոցին հավաքածի մնացորդ կրեօնքը[40] պիտի սպառվեր երկուշաբթի օրվա ընթացքում, այն էլ բացառապես երիտասարդների և երեխաների կողմից։ Իսկ հասակավորները և մանավանդ ծերունիները խնամքով լվանում էին բերանները, որ ուտիսվա կերակուրներից ոչինչ չմնա ատամների մեջ։ Կանայք տունը տուն ըն տուն՝ դուրս էին տալիս և ամանները մոխրով, ջրով թամզում նույն նպատակով։ Սովորաբար գնում էին գերեզմանատուն և այդ տարվա ննջեցյալի—Նավասարդից հետո մեռածի գերեզմանն օրհնում և բերածը նրա թումբի վրա ուտում. լոբի, փլավ, բիֆի՝ բեխի և ձեթով պատրաստած այլ կերակուրներ, որից հետո այցելում էին մե-

---

37 Մի քսան հոգի բաժանվում են զույգ-զույգ, մի զույգն իրար ձեռքից բռնած վիճակով կանգնում է մեջտեղ, մնացածներն աշխատում են նրանց թակել, իսկ նրանք առանց իրարից կտրվելու դես ու դեն են ընկնում թակողներին հարվածելու կամ բռնելու համար։ Եթե մեկին բռնեցին, բոլորն էլ հարձակվում են այդ բռնվածի վրա և ծեծում, մինչև որ նրա զույգ կազմող ընկերը հասնում է և նրա հետ զույգ կապում։ Այդ նույն զույգն արդեն փոխարինում է առաջին զույգին։

38 Տրնգի (այլ գավառներում՝ չիլիկ) մի ծայրը կիսատաշ փայտիկ է։ Այդ ծայրին ձեռքի ձողով զարնելով, փայտիկը գետնի վրայից թռցնում են և քշում, իսկ չրնգի, երկու ծայրերը հավասար փայտիկ է, որն օդի մեջ է վեր ձգվում ձեռքով, ոչ գետնի վրայից, և զարնելով հեռու քշվում։ Տրնգի խաղում են և աղջիկները։

39 Ընկերներից առաջինը մեջքից կռանալով՝ քրշանալով, կանգնում է, մյուսը նրա վրայով թռչելով մի փոքր առաջ է կանգնում, նույնպես քրշած, երրորդը նախ առաջինի և ապա երկրորդի վրայից թռչելով կանգնում է նույն գծով ավելի առաջ, չորրորդն այս երեքի վրայով թռչելով կանգնում է ավելի առաջ։ Երբ բոլորն այսպես մի գիծ կազմած՝ կռացած կանգնում են, ետևի կանգնածը, նա, որ առաջինն էր քրշացել, բոլորի վրայով թռչելով կանգնում է նրանցից առաջ, նույն հաջորդականությամբ հետևյալը, և այսպես այս կռացածների շարանը շարունակ առաջ և առաջ է գնում։ Թռիչքներին ժողովուրդը հատկացնում էր բուսական և կենդանական աշխարհը մեծացնելու, բուսցնելու մագիկ ուժ։

40 Կրեօնք կոչվում է ոչ միայն տավարի կերի մնացորդը, այլ նաև հացի և կերակուրների։